

## Դ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ<sup>1)</sup>

Նոյն տեսարանը:

Մետքոգորի տան կողմակի դուռը ծածկուած է վա-  
րագուբով։ Կորա առաջ թափթփուած են մարմարինի  
խոշոր կտորներ։ Խոցանից մեկի վերայ գտնուամ է զանա-  
գան զործիքներ, մուրճ և այլն։

### ՏԵՍԱՐԱՆ I

ԵՒՊԵՑ ԵՒ ՀԵՐՈՍՏՐՈՏ. (Դուրս են դալիս վերջին անկց)։

ԵՒՊԵՑ Դու Հերոստրատ, իմ սրբազան  
Պատերազմի մեծ դաշնակից,  
Ճիշտն եմ ասում, ես առաւել  
Նախամեծար կը համարեմ,  
Թէ որ այժմ ինձ ցոյց տուած  
Կաւից թրծած նախատիպար  
Անդրու փոխան՝ ես դիտէի  
Համակ սսկուց և թանգարին  
Ազնիւ, Հնդիկ փըղոսկրից  
Կազմ ու պատրաստ՝ աստուածունու  
Վեհ արձանը։

ՀԵՐՈՍՏՐՈՏ Մեծ քրմապետ,  
Շատ հեռու չէ և այդ օրը։  
ԵՒՊԵՑ Զանք ու եռանդդ ես գովում եմ.  
Վերջին անգամ այս առաւօտ  
Արշալոյսին թեթևսոլիկ  
Աթենացին իւր արձանի  
Վրայից անցրեց գրոցի լեզուն։

1) Տես «Հումայ», № 5 1903 թ.

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Անկարելի բան ես պատմում:

**ԵՒՊԵՑ** Ազնիւ խօսքս քեղ երաշխէք:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Մաղրական եղանակոյ)

Աւելի վատ:

**ԵՒՊԵՑ**

Սարուկն յանկարծ

Բերնից թռցրեց:—Անդրին ամբողջ

Կազմ, պատրաստ է և փայլում է

Իւր մերկութեամբ: Իսկ քոնը դեռ

Սկսուած էլ չէ: Հէնց սկզբից

Խուժան ամբոխն հետաքրքիր

Իւր հայեացքին յադուրդ կտայ,

Աչի առաջ պարզ տեսնելով,

Ինչ որ քնքոյց գեղեցկութիւնն

Զգայնական քիմքն է շոյում:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Ամեն մի իր, անձ ու անհատ

Որ պատաժ է Արտեմիսի

Քող, շղարշով՝ անպարտ, անյաղթ

Միշտ կմնայ. իմ հաւատը,

իմ յոյսն է այդ:

**ԵՒՊԵՑ** Աստուածուհու յոյսն էլ դռւ ես:

Դժուար բան չէ նորա համար

Անօրէնի կերտած անդրին

Կայծակ-նետով ջարդել, փշել,

Հետք ու փետուր անհետ անել.

Բայց և յաճախ մահկանացուի

Զնին բազուկն իւր բարկութեան

Զէնք ու գործիք է դարձրել:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Ասելու ինչ է:

**ԵՒՊԵՑ**

Նթէ այսօր,

Պատահաբար, եկուոր հիւրի

Մարմարիսնը ջարդ ու փշուր

Դարձած գտնուի՝ շատ հեշտութեամբ

Ես երկիւղած խուժ ամբոխին

Կը համոզեմ, թէ երկնքից

Ինքն իր ձեռքով է ուղարկել

Աստուածուհին իւր բարկութեան

Շանթ ու կայծակն:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**

(Չափելով նորան ուղիղ-գլուխ):

Խելօք խօսք է:

Աստուածունին ինձ առաւել  
Մեծ յաղթութիւն կը պարգևէ:  
Մի այլ զէնքով:

ԵՒՊԵՑ

Ոյինչ չունիմ.

Քո ասածիդ պէս թող լինի՝  
Բայց չմոռնաս, որ մըշակիցդ  
Վատանդաւոր ախոյեան է:  
Դու էլ գիտես՝ աստուածների  
Պահած գառը գայլ չի ուտիլ:  
Ով ինքըն է իւր գործի տէր,  
Աստուածները նորան էլ միշտ  
Օգնական են: Յարմարագոյն  
Ժուկ-ժամանակ դու չես գտնիլ,—  
Արևն արդէն խոնարհում է  
Դէպի իւր մուտքն, աղմուկ, ժխոր  
Վաղուց հետէ գաղարել է,  
Եւ սրբազն մեր մեհեանի  
Շուրջը բոլոր հէնց այս ժամին  
Անդորրութիւն է լոկ իշխում:—  
Ահա որտեղ դու կդտնես  
Քո թշնամու ձեռքի արդիւնք.

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մի փորձիր ինձ, մի հրապուրիր:

ԵՒՊԵՑ Միայն բարակ վարագուրով  
Քողարկուած է իւր վարպետի  
Անհոգ ձեռքով: Այստեղ նայիր.  
Տես ինչպիսի անհոգութեամբ  
Գրոց, դուրիկ և ծանր մուրճն  
Ընկած են վայր, ոտքի տակի:

(Ը-ՀԵԼՊ ՃԵՐՃԸ ՃԵռՔԸ ՃԵՆՔ և ԹԵԹԸ է անում.)

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինձ փորձութեան մի տանիր դու:

ԵՒՊԵՑ Այժմ հեռնե, շատ հեռու է:  
Ես սրբազն անտառի մէջ  
Հանդիպեցի նորան՝ ուրախ  
Անհոգ, վայրուն ու վառ դէմքով  
Զբունում էր նա թևանցուկ  
Այն կնոջ հետ... .

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Բացականչում է):

Հ'ը, նորա հետ...

**ԵՒՊԵՑ** Ընտրելուհու հետ միասին,

Որը նորան ի արիտուր

Իրեն անմահ դիցանուշին

Համհաւասար բաղդատութեան

Դնելու համար, հէնց այժմենից

Երկրիս վերայ իւր սիրելուն

Արքայութիւն է պարզեում:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Օ՛, տուր ինձ այդ ծանր մուլճը:

**ԵՒՊԵՑ** (թեթև կերպով թողնում է, որ մուրճը ձեռքից Խլէ):

Ազնիւ, արդար բարկութեամբ ես

Լցուել, վառուում: Գնա, փշրիր

Եւ խորտակիր գեղեցկութեան

Արքայութիւնն: Եւ տապալիր

Յափշտակած, խլած գահից.

Ես քաղաքում ուրախառիթ

Այդ համբաւին եմ սպասում:

(Դուքս է քնում ձաւ կողմօ):

## ՏԵՍԼԵՐՆԻ, II.

**ՀԵՐՈՍՏՐԱՏ:** Յետոյ ՏԻՄԱՐԻՑԱ.

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Մեղնակ):

Այժմ արդէն վրէժիմնդիր

Ես կը լինեմ:

(Բարձրացյած մուրճով վազում է դեղի ծանկուած արձանը և բազ բարձրացնում: Վրկում Մի առ ժամանակ նա կանգնած է, որպէս քարացած՝ տեսածի ապաւորութեան տակ: Այդպէս նա կանգնած է մի վորք ժամանակ էլ անշարժ, առաջուսոյ պէս անթարժ նոյնընդ արձանին, ինչպէս մի երկնային տեսիլի Կակավելով յազաւմից Ես... ես... այնտեղ...

(Դուքս է ամբողջ մարմեզ: Աերջապէս գմուռութեամբ շնչելով գլուխը զարձնում է, կարծես ինքն-էրեն սովորելով էրական աշխարհ դառնալ և նկատում է Տիմարիսիային, որ նոր էր դուրս եկելանից իւր անհասասա քոյլերով: Մուրճը ձեռքից շիթոնելով, օրօրուելով, դիմաւորում է նորան և բացականչում է յուսահասութեամբ):

Մայր իմ...

**ՏԻՄԱՐԻՏԱ**

Որդիս, դու այստեղ ես:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**

(Քշամբաբար ողմում է նորա ձեռքը):

Նա այլ ևս ինձ չէ սիրում:

**ՏԻՄԱՐԻՏԱ** Ժամանակ է, կարծեմ, որդիս,

Մոռնալ, ձգել սիրադրժին:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Աստուածունին նոյնպէս, մայր իմ,

Աստուածունին նոյնպէս նորան

Առաւել է սիրում, քան ինձ:

**ՏԻՄԱՐԻՏԱ** Ի՞նչ ես ասում:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**

Ահա այնտեղ

Դրուած է նա՝ նորա արձանն.

Դա Կիտիայի արձանացրած

Տիպ ու պատկերն է իսկապէս,—

Ի՞նչ եմ տօսում. շատ տռաւել

Վեհ, քան Կիտիան: Թէ որ տեսնել

Կարենայի՛ր: Ա՛խ, թէ ես էլ

Կոյր լինէի, ինչպէս դռւ ես:

Այդ արձանը ես փշելու

Էկ եկել. բայց, մայր, տօնմ:

Որ արձանը ինքն ինձ փշեց

Ու տապալեց...

**ՏԻՄԱՐԻՏԱ**

Դելն ես տալիս:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Զէ, ես կուզեմ ինքս ինձ խարել,

Թէ չեմ տեսել այդ արձանը:

(Արագ մտենում ծածկուած արձանին):

Հեռնե, հեռնե, բանդագուշանք:

(Ըսնում, ձգում է ծածկոց):

Բայց և այնպէս՝ ես տեսնում եմ:

Առաջս կանգնած, կեցած է նա.

Եւ յափետան՝ հուր յափետան

Պիտի կանգնած մնայ նա միշտ:

Ոչինչ, ովնչ է իմ ձեռքի,

Մաքի ծնունդ, արտադրութիւն:

**ՏԻՄԱՐԻՏԱ** Ի՞նքդ ես ձգում, դու թուզամորթ,

Ստորացնել, քեզ վայր ձգել:

<sup>1)</sup> Զառանցում ես:

Քո կոյր մօրդ ականջ արա,—  
Աւա մօտ է փառքիդ ժամը,  
Վեհ, ուղղամիտ է քո գործը:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Հա, հա, հա, հա... Զեռքիս գործը:

Անվերջ ջանքի ու տանջանքի  
Միայն պառւղ, իմ գեղեցիկ,  
Անանց ու վեհ արտադրութիւն,  
Աւա քեզ մօտ եմ շտապում:

(Մուկոճը ձեռքին գազում է գեղի իւր տունը):

(Այս տեսաբանի ժամանակ մթնշաղն արդեն ընկել է:  
Տաճարից դուրս են գալիք երկու սորուկ, ձեռքերին մի-  
մայս ջահ, գնում են ջահձողերի վրայ և գնում դե-  
ղեսիսից տունը):

### ՏԵՄԱՐԻՑՆ Յ. III.

**ՏԻՄԱՐԻՏԱՆ ՀԱՄԱՐԻՏԱՆ և ԿԼԻՏԻԱՆ.**

**ՏԻՄԱՐԻՏԱՆ.**

(Կարծելով թէ դեռ ևս չերոստափ հետ է խօսում  
որի հեռանալը շեր նկատել):

Եյն վեհ գործը քեզ աւելի  
Կլինի, անշուշտ, միսիթարող,  
Քան թոյլ խօսքերս:

(Այս արագառնում է իւր տունը: Պրակսիտելն ու Կլի-  
ման երեսում են աշ կողմց):

**ԿԼԻՏԻԱՆ.**

Գիշերն արդէն

Վրայ հասաւ:

(Խնում է նեղ շաւլով):

Ահա այսպէս

Քեզ հետ միասին առաջ երթամ  
Անյայտ հեռ հեն. ոչ գիշերուայ  
Խաւարն ու մութ, ոչ անախորժ  
Վատ եղանակ, ոչ փրփրադէզ  
Մովի ալիք, ոչ սաստկաշունչ  
Ահեղ մըրիկ, և դոցանից  
Եւ ոչ մէկը ինձ փոյթ էլ չեն:

(Մութն ամելի ու ամելի է ընկնում ամպերի յետից  
երեսում է լուսինը):

**ՊՐԱԿՍԻՏԱՆ.** Այնտեղ, ահա, որտեղ հեռւում,  
Մայր-մտոցի հրաժեշտ տուող

Ճառագայթը ոսկէ շողեր  
Սփռած շերտով զիկ է բռնել՝  
Այնտեղ ձքնաղ իմ Աթէնքն է:  
(Նորա դուեւը բանելով և իւրեւ դարձնելով):

Օ՛, հչ. երբէք քո հայեացքը  
Պիտի շիշինէ հեռուն փախչել  
Նւ թափառելի ինձ, ինձ միայն  
Այդ հայեացքի վառ, վայլ շողեր  
Պիտի զուգեն ծես, աես ահա  
Արտեմիսն էլ իւր սրարշաւ  
Կառքի վերայ սուրումսահում  
Նւ գաղտ աշքով, աչքի-պոչով  
Մութ սաղարթի ցանցի միջից  
Մարմարիօնէ իւր սեփական  
Տիպ արձանին աչք է նետում:

(Մի փոքր բարձրացնում է արձանի ծածկոցն ոյնպէս  
որ լուսինը լւասաւրումէ):

Մի լաւ նայիր, ով դիցանոյշ,  
Արուեստագէտի գործը, արդեօք,  
Քեզ գահացում չէ պատճառում:

ԳՐԱԿԱՍԻՏԵԼ (Նստելով մարմարիօնի կոպտար կոտրէ վերայ):

Մի բաց անիլ, ինչ որ այնտեղ՝  
Մթնշողում, քողով ծածկուած  
Ու պահուած է—վերջացած է,  
Բայց դորա հետ այս օրուանից  
Է՛լ կորած է:

ԿԼԻՑԻԱ.

Գո արձանը

Այս օրուանից միայն սկսած  
Կեանք է բուրում,—նա ապրում է:

ԳՐԱԿԱՍԻՏԵԼ Այս միայն ուրիշների

Աչքի համար: Իսկ ինձ համար՝  
Արդէն մեռաւ, անկենդան է:

ԿԼԻՑԻԱ.

Երբ նուաճած աղդ ու ու լեզու,  
Իբրև մրրիկ իւր թափի հետ  
Առած կտանէ յաղթանակով  
Նոյնպէս նոցա, որ սկզբում  
Ոտք դէմ դրած նորա առաջ

Կանգնած էին, երբ դղրդող  
Օրհներգութեան ձայների հետ  
Իւր նոր տունը՝ գոներն արձակ  
Լայն բաց արած տաճարի մէջ  
Ոտք կը դնէ...

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** 0՝, լուս կեցիր:

Այդ բոլորը թոյլ արձագանդ  
Կվինէր միայն այն նուագի,  
Որ հնչում էր հոգուս խորքում,  
Մինչ դեռ նորան կերտում էի:  
Թող հիւրընկալս բոլորովին  
Կազմ ու պատրաստ ձեռքիս պտուղն  
Իւր տաճարի շքեղ, հարուստ  
Զեղնայարկի տակը տանէ,  
Խունկ ու կնդրուկ, ողջակիղի  
Հոգսերն ամեն վրան առնէ:  
Նո շատ կանուխ լիքն ըմբանակ՝  
Բաղտի բաժկից բաժինս առի:—  
Տականքները ես չնմ սիրում:

(Կողքէ-կողք նստում է Պրակսիտելի հետ և սեղմառում  
նորան):

Այսպէս երբէք դու չես եղի:  
Նրկիւլ, սարսափ է տիրում ինձ,  
Պրակսիտել! Այս երեկոյ  
Յոյս ունէի տեսնել հալարտ,  
Հրճուող, ուրախ...

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Գիտենս, Կիտիա,  
Անջատումի ամեն շիթից  
Վիշտ է ժայթքում, ցաւ է ծորում...

**ԿԼԻԹԻԱ** Անջատումի Ինչ անջատում...

**ՊՐԱԿՍԻՏԵԼ** Անջատուեցի իմ աւարտած  
Մաքիս զաւակ, ձեռքիս գործից:  
Հըրաժեշտիս ողջոյն տուի:  
Նորա շքեղ հանդէսներին  
Մէկ էլ մարող այն արել  
Որ ծովն իջաւ, կծագի նորից  
Նրբ ես այնտե՛ղ... հեռուում կլինիմ:  
**ԿԼԻԹԻԱ** Ասա, խօսիր, Պրակսիտել,

Ի՞նչ ես փնտռում, նորից խուզում  
Ամպով պլուած հորիզօնի  
Գաղտնաբանում:

## ՊՐԱԿՍԻՑԵԼ

ԻՄ ԱԹԷՆՔԱ,

ԿԼԻՑԻԱ Բայց յիշաւմ ես, որ ասացիր,—  
«Այստեղ մի նոր Աթէնք գտայ»:  
ՊՐԱԿՍԻՑԵԼ Օ՛, թէ գոնէ՝ լոկ մի անգամ  
Տեսած լինէիր:

## ԿԼԻՑԻԱ

Այդչափ չքնաղ,

Գեղեցիկ է:

## ՊՐԱԿՍԻՑԵԼ

ՄԻ ԺԱՄՆ ԻՆՉ Է.

Մի ժամ անգամ հեռու լինելն  
Կորած բան է. ամբողջ աշխարհո  
Պարփակում է իւր մէջ միայն.  
Նորա դռնից ոտք դուրս դնելն՝  
Աքսորանքի ցուզ առնել է:  
Նորա օդը, օդը անգամ  
Ողջ հմայք է տեղն ու տեղը:  
Այնտեղ գեղը, հաճ ժպիտով  
Ողջունելով ծնուռդ մանկան,  
Այնուհետև ամեն քայլում  
Դարանակալ հետեւում է  
Այդ ծնուածին մինչ գերեզման:

## ԿԼԻՑԻԱ

Օ՛, թէ քեզ հետ այնտեղ լինեմ...

## ՊՐԱԿՍԻՑԵԼ (Շարուհակելով):

Սաղարթախիտ լուռ պարտիզում,  
Լեռան լաջին կանգնած է մի  
Պարզ, հասարակ, բարձրահայեաց  
Պայծառ, ուրախ տուն՝ մենաւոր.  
Նուրբ, սիւնազարդ անդաստակով <sup>1)</sup>՝,  
Որ երեսի վերայ ձգուած  
Որբ է մնացել. թէ չէ՝ ուրախ  
Մուրճի զարկերն կեանք կտային  
Կ'աղմէին են բոլոր տունը:  
Դա – իմ տունս է: Նւ նիրհում է  
Այնտեղ ընկած անձեւ, կոպար

1) Portique

Մարմարիսնը: Նու եմ կոյին  
Ականջ սրած սպասում է  
Նոր կերպարանք ստանալու,  
Ա՛խ, թախիծը...թախիծն օձի  
Նման փաթթուել, սիրտս կրծում  
Ու մաշում է՝ իմ մոռացուած,  
Լքուած, թողած աստուածներիս  
Սրտմաշուքով: Ա՛խ, այդ թախիծն...

## ԿԼԻՏԻՆ

Քո Աստղիկան խիստ կարօտնվ:  
ՊՐԱԿՍԻՑԵԼ Նամանաւանդ նորա կարօտն...  
ԿԼԻՏԻՆ (Տեղեց վեր թաշելով):

Դու սիրում ես, հա, դեռ նորան:  
ՊՐԱԿՍԻՑԵԼ (Խնելով աեղեց):

Միշտ սիրել եմ, պաշտել նորան:  
Իսկ դու, ասա, դու չես սիրում  
Փրփուրոծնունդ Կիպրոսուհուն  
(Յուղմակրով):

## ԿԼԻՏԻՆ

Նրա երկրաւոր նախառիպար  
Կինը... արդէն սպասում է  
Քեզ անհամբեր:

## ՊՐԱԿՍԻՑԵԼ

Այն կինը, ինձ:

## ԿԼԻՏԻՆ

Նորա կարօտն է քեզ մաշում:

## ՊՐԱԿՍԻՑԵԼ

(Հանաբագ):

Այն, դու խենդլուկ:

## ԿԼԻՏԻՆ

Խոստովանիր:

Ի դէմս նորա աստուածուհուն  
Ես դու սիրում, ինչպէս իմ մէջ  
Մի քիչ առաջ սիրում էիր  
Արտեմիսին, որի հետ էլ  
Անհետ կորայ ես քեզ համար:  
Դու ինձ համար ամեն ինչ էիր,  
Եւ քեզ ամեն ինչ ձօնեցի  
Առ դոցա և կեանքս էլ:  
Թպրտացող իմ խեղճ սիրտս  
Տար գիր նորա ողջակիզի  
Բագնի վերայ, իբրև նոր զոհ:  
ՊՐԱԿՍԻՑԵԼ Եւ ասողը Կիտիան է, հա,

Աղատակամ ընկերուհիս,  
 Որը գիտէր իմ նպատակս  
 Եւ համակուած էր ինձ տիրող  
 Վառ հաւատով: Լուծ ես ուզում  
 Դնել վրաս. խանդուտ օղակ,  
 Շղթաներով գործի սիրով  
 Բորբոք ձեռներս կապել կուզես,  
 Եւ իմ առաջ ընդ միշտ փակել  
 Գեղեցկութեան չեռ բարձունքում  
 Իւր բունն հիւսած յարկի դռներն:

ԱԼԻՇԻԱ  
 Ա՛խ, աչ ներիր, ներիր ինձ դու:  
 Ներիր անմիտ զառանցանքներս:  
 Էլ միւս անգամ դու չես կըկնիլ  
 Քո հարցերդ: Իմ սէրն երբէք  
 Փեղ կաշկանդող շղթայի դեր  
 Զի կատարիլ: Ստեղծագործող  
 Բազուկդ երբէք ես չեմ խիլ  
 Ժողովրդից: Ինձ դու միայն  
 Հէնց այն չնչին հանգամաքով  
 Ուրիշներից շատ վեր, շատ վեր  
 Տարար, հասցրիր, որ ողջ սիրտդ  
 Ինձ ձօնեցիր: Ես լաւ գետեմ  
 Դու այն մէկին չես էլ կարող  
 Սիրել այնպէս, ինչպէս որ ինձ:  
 Եւ քո սրտի գաղտնարանի  
 Բանալիքը չես հաւատայ  
 Նորան երբէք: Թոնդ նա ինձնից  
 Շատ գեղեցիկ, չքնաղ լինի.  
 Եւ թէ նոյն իսկ աստուածների  
 Մեղ պարգևած ամեն մի օրն  
 Դու շարունակ աստուածուհու  
 Դիմագծներն առնես, կերտես  
 Նորա դէմքից, ապա գիտցիր,  
 Զեմ նախանձիլ ամենսկին  
 Նորան երբէք: Միայն թէ ես  
 Հետդ մէկտեղ կարող լինիմ  
 Ծծել չուրջդ պատող օդը,  
 Եւ մթնշող երեկոյին

Յոզնած գլուխսդ առնեմ գիրկս...

Քո յետեց քաշ գայ, ուր որ

Քայլերդ կուղղես, ուր որ երթաս՝

Ինչպէս սարուկ հաւատարիմ:

ՊՐԱԿՍԻՑԵԼ Կամենում ես...

ԿԼԻՏԻԱ

Ուր որ լինես,

Ուր էլ չերթաս՝ իմ հայրենիքս

Էլ այնտեղ է: Տար ինձ Աթէնքդ:

Թող կապտին տայ հեռում սրտիս,

Հոգուս հատոր, իմ անձկալի

Նփեսոսի անուշ ափերն,

Բայց ես գլուխս չեմ էլ թեքիլ

Նորա կողմը, չեմ էլ նայիլ.

ՊՐԱԿՍԻՑԵԼ Լաւ մտածիր որոշումդ:

ԿԼԻՏԻԱ Զափել, կշռել, մտածել եմ:

ՊՐԱԿՍԻՑԵԼ Նաւահանդիստ իսկոյն և եթ

Կիշնեմ այժմ,—պահապանը

Դեռ քնած չէ,—ես կիմանամ՝

Գուցէ վաղը, նաւս ուռցնել

Կարողանայ առադաստներն,—

Մեզ Ատտիկէ հասցնելու:

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ: Հէնց վաղը:

ՊՐԱԿՍԻՑԵԼ Դողնում ես դու,

ԿԼԻՏԻԱ Օ՛, ոչ. ոչինչ,

ՊՐԱԿՍԻՑԵԼ Լաւ մտածիր.

Օտար երկրում սիրած բոլոր

Ծաղիկներդ իսկ չեն բուսնում:

Քո բնական հողդ սա է.

Եւ ինչ էլ ճոխ, վարթամ ծաղկել,

Բացուել ես դու: Դու նորա հետ

Կապուած, կպած ես արմատով,—

Թէկ նոքա քո աչքերից

Անտես լինեն,—արժէ միայն.

Դանակ քաշել այդ արմատին

Եւ խեղճ ծաղիկն՝ անհետ կորաւ.

ԿԼԻՏԻԱ Ո՛չ, ոչ.

ՊՐԱԿՍԻՑԵԼ Ինչու ուրեմն այդպէս

Դող ու սարսուռ է քեզ պատել:  
 ԿԱԼՏԻՆ  
 Պատճառն այն չէ, որ իմ սրտիս  
 Ցաւ ու կսկիծ է, որ յանկարծ  
 Հայրենիքից պիտի բաժնուիմ,  
 Այլ այն միայն, որ դու այստեղ  
 Խմս էիր, ամբողջապէս,  
 Խմս միայն, խակ, ահ, այնտեղ.  
 Ել իմս չես:

**ՊՐԾԿՈՒՑԵԼ.** Օ՛, սիրելիս:  
 Ես պարտք ունիմ, պարտք անվճար  
 Խղճիս, ինչպէս և քո առաջդ:  
 Ի՞նչ կանէի Նփեսոսը  
 Ես առանց քեզ: Դո՞ւ, դու դարձրիր  
 Նորան կեանքիս գագաթնակէտ:  
 Ինչու արդեօք վառ արևի  
 Հապճէալ ընթացքն ես չեմ կարող  
 Կանգնեցնել և կամ ասել,  
 Հրամայել որ թանգաղին  
 Ժամանակի ըոսէները  
 Ել չը շարժուին: Արդէն ահա  
 Վաղուայ օրը դարբասի մօտ  
 Կանգնած, ծեծում և բարձրածայն  
 Պահանջում է արքայական  
 Իւր իրաւունքն: Ի՞նչ է բերում  
 Նա մեղ համար իւր թիկնոցի  
 Տակ թագցրած: Մենք չգիտենք:  
 Սիրով նայենք մեր անցեալին:  
 Ինչպէս որ իմ ստեղծագործած  
 Անդրին դարեր պիտ հոլովէ,  
 Եյնպէս մեր միտքն անցեալ բաղդի  
 Օրերն ամուր կը պահպանէ  
 Իւր սուրբ ծոցում:—Ես վայր կիջնեմ  
 Նաւահանդիստ, տեսնեմ ինչ կայ:  
 ԿԱԼՏԻՆ Բայց, ասա, ինձ, երբ կը դառնաս:  
 ՊՐԾԿՈՒՑԵԼ Շուտով կը գամ:  
 ԿԱԼՏԻՆ

Քո լուր տալուն

Կսպասեմ ես: Հէնց որ կանչես,—  
 Պատրաստ կինեմ հետդ մեկնել:

ՊՐԾԿԱՍԻՏԵԼ Ե'կ, մի անգամ էլ համբուրիր:  
ԿԼԻՑԻԱ Հազար անգամ:

(Գրկախանում և համբուրում են: Պրակսիտելը ու  
բարձրացնելու և նորա դրկից և շատով նաև հանգան  
դիմ իշխում):

## ՏԵՍՄԱՐՄՆԻ, IV

ԿԼԻՑԻԱ, ՅԵտոյ ՀԵՐՈՍՏՐԱՏ,

**ԿԼԻՑԻԱ.** (Մենակ. նորից նասում և մարմարինի կտորի մրցյ):  
Ձեփիւռ, դու արի, այտերս հովզուր,  
Բայց իմ խեղճ սրտիս՝ խսկի ձեռք չտաս,—  
Նորան հաճելի է կիրք ու բոցեր,  
Թէ իմ մաղերիս հետ խաղաս, կասեմ,—  
Սիրելուս մատներն են շոյում նոցա:  
Հնվեր, դուք եկէք այտերս համբուրէք,  
Թող ձեր ամեն մի հով շունչ հոսանքում  
Զգամ ես նորա ջերմ շունչ, գուրդուրանք.  
Այդ շունչ, գուրդուրանք իմս են բոլոր:  
Անտես լարերից օրհներգ էք հնչում  
Ի պատիւ նորա. ձեր մեղմ հպումով  
Ակացիոյ թուփը, արև շողերի  
Շտամանդ փոշիներն, հուժկու ծովերի  
Գանգուր ալիքներն, —իմ շուրջս բոլոր,  
Բոլոր տարերքը նորան են երգում,  
Իմ խեղճ ականջիս նորան շնջում:

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

(Այլսլուած և բոլորովին պյառկերպ գելքով, ծանր  
շոշացնելով դուրս է դալիս իւր անից՝ մուգու մնու-  
քին: Կա անհաստատ քայլերով առաջ է դալիս):

## ԿԼԻՑԻԱ

(Նշատելով նորան, սարսափում և աեղից վեր և  
թռչում):

Ո՞վ է այնտեղ:

(Ճանաշելով):

Ի՞նչ ես ուզում:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հ'ը, այդ դու ես, համ, դաւաճան,  
Պահապան ես դարձել այստեղ:

## ԿԼԻՑԻԱ

(Զարհուրած նորա տեսքից)

Օ'...

ՀԵՐՈՍՏՐԱՏ նորից դողում, սարսովնեմ ես

Քո պաշտելի անձի համար։  
Մի վախենար։ Միայն կուզեմ  
Դարձնել նորան ինչ որ իրեն  
Է պատկանում։ Բետ տուր իրեն։  
(Մեկնելով նորան մուրճը)։

**ԿԼԻՑԻԱՆ** Սա ինչ բան է... ինչի նշան...  
Այս մուրճն ինչ գործ ունի ձեռքումդ...  
**ՀԵՐՈՍՏՐԱԾ** Պրակսիտելի մուրճովն ահա,—  
Հէնց այս մուրճով, —ջարդ ու փշուր  
Արի իմ գործս, աշխատանքս։  
(Շպրում է մուրճը)։

**ԿԼԻՑԻԱՆ** Դու, քո՞ ձեռքով...  
**ՀԵՐՈՍՏՐԱԾ** Հարիւր կտոր  
Դարձրի նորան։

**ԿԼԻՑԻԱՆ** Բայց... բայց ինչու.  
**ՀԵՐՈՍՏՐԱԾ** Ինչպէս էլ շուտ էր կատարւում,  
Որքան ուրախ, թեթև սրտով  
Նըպատակիս արդէն հասայ։  
Զէ որ արժէր ջանք գործ դնել.  
Հ'ը, ճշմարիտ, չարժէր միթէ  
Ջանք գործ դնել։

**ԿԼԻՑԻԱՆ** Օ՛, անմահներ։  
**ՀԵՐՈՍՏՐԱԾ** Նպատակիս շատ թանգ գնով  
Ես չհասայ, իզուր չէր, որ  
Դեռ իմ քնքոյշ մանկութեանս  
Հէնց առաջին իսկ օրերից  
Ուտիչ մի միտք ճնշում էր ինձ.  
Իզուր չէր, որ ամբողջապէս  
Նորան մատնուած, տարուէտարի  
Տանջւում էի ես անընդհատ  
Ցաւերի մէջ և յուսահատ  
Հծուում էի. իզուր չէր, որ  
Նրիտասարդ աարիներս  
Ես զոհ բերի իմ ճիւաղին,  
Ուրախութիւն և հրճուանք  
Խիստ մտրակով ինձնից հեռու  
Ես քշեցի. իզուր չէր, որ  
Բաղդը ժպտուն շեմքիցս դուրս

Վանդեցիր Եւ այդ բոլորն  
Այն պատճառով, որ գիտենամ  
Թէ ով եմ ես, —մի խեղճ գաճաճ,  
Անճար թզուկ, խլուրդների  
Զարմ ու զաւակ, ուրիշ ոչինչ,  
Թէև փոքրն ու չնշինը  
Ատում էի բոլոր հոգւովս, —  
Բայց և մեծին անընդունակ  
Մարդ էի ես. մի խեղճ ճիճու  
Փոշու, ցեխի մէջ սողացող,  
Ողորմելի որդ ապիկար,  
Որ արծուի թև ու թոփք  
Էր երազում: Մեծ հսկայի  
Գարշապարը կոխեց, զնջեց  
Խեղճ գոյութիւնս և ես ինքս  
Ծաղը ու ծանակ ինձ դարձրի:  
Որչափ հիւանդ ու ընկճուած ես.  
Թէ որ հնարք ունենայի  
Քեզ այդ ցախց բժշկէի...  
Եթէ վատ բան կամ չարութիւն  
Քեզ արեցի, իմացիր, որ

Դիտմամբ եղած չէր արածաւ  
Գո անողոք վատ թշնամիդ  
Հէնց քո մէջդ է քնակւում  
Ինձ հաւատա, Հերսոսարատ,  
Երբ որ սրտիցդ հանես, ձգես  
Սև նախանձը, որ դչըի պէս  
Սիրտդ փորում ու ծակում է,  
Նորից ուրախ, անհոգ օրերդ,  
Երիտասարդ ոյժերդ կը զան:

Այդ կատարել...

**ԿԼԻՏԻԱ** կարողացիր:  
**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Նորան կը տամ անմահութիւնն  
Յաղթութեան հետ, խոնարհութեամբ  
Գլուխ կը ծոեմ ունայն, չնշին  
Ու վաղանցուկ կետնքի լծին:  
Ա՝խ, անաստուած, իմս եղիր,

Դու միայնակ: Քեզ սիրում եմ.  
 Բայց սիրում եմ խելառի պէս,  
 Զար նախանձով, զգուանքով լի:  
 Ի՞մս եղիք: Թող քո ջերմին,  
 Հրուտ կրծքիդ անցրած ըոպէս  
 Անանց հաշուեմ: Ի՞մս եղիք:  
 Թող ես մոռնամ, յափշտակուեմ  
 Կըքոտ հեշտանք փափկութեան մէջ  
 Իմ գոյութիւնս սիրոյ անանց,  
 Նքեղ, պայծառ խնճոյք տար ինձ:  
 Բայց, մէկ ասէն, —յիմար, անմիտ,  
 Ի՞նչ անաղան հիւրի նման  
 Դուռ ես ծեծում...

ԿԼԻՑԻԱ

(Յետյես և բաշւում: Դանդաղութեամբ դուժը շար-  
 ժելով):

Ես չեմ կարող.

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Այժմ դարձար հաւատարիմ:  
 Կոյրաշիկայ, դու կարծուի ես,  
 Արժէք ու գին կը տայ սիրուդ:  
 Երբ և իցէ նա կը սիրէ  
 Ինչպէս ես եմ սիրել՝ խելառ:  
 Դու ինձ համար եւ կետք էիր,  
 Ե՛ւ փրկութեանս ամուր խարիսխ,  
 Ե՛ւ լոյս անչէղ, եւ կարևոր  
 Գան սեփական սրտիս բարախ:  
 Միակ կինը երկրիս վերայ:  
 Նորա համար... Զձի կը բերէ  
 Իւր ապագայ փառք ու համբաւ  
 Սիրուդ համար, կըմոռանայ  
 Իւր արուեստը լոկ քեզ համար:

ԿԼԻՑԻԱ Ո՞չ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Եւ դարձեալ...

ԿԼԻՑԻԱ Սիրում եմ ես,

Սիրում նորան:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Թէս դորա  
 Փոխարէն քեզ արհամարհէր...

ԿԼԻՑԻԱ Սիրում եմ, սիրում նորան...

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Թէս լքէր, դէն շպրտէր...

**ԿԼԻՑԻԱ** Սիրում եմ, սիրում նորան:  
**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Կին դու, բաւ է, ինձ մի տանջիր:  
 Գոնչ յոյսի մի չնչին կայծ  
 Շնորհիր, առուր ինձ, որ ես նորա  
 Մութ շողերով խղճուկ օրերս  
 Քարշ տամ անցնեմ. Մի մտածիր,  
 Պաշտած կուռքդ կերթայ շուտով  
 Եւ կմնաս դու մէն մնանակ.  
 Նորա հմայքից կամաց-կամաց  
 Աչք կը բանաս և մի ուրիշ  
 Ներող սիրոյ ձեռք կը մեկնես..  
**ԿԼԻՑԻԱ** Ես նորա հետ Աթէնք կերթամ:  
**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Բացականչելով):

**ԿԼԻՑԻԱ** Ո՛չ չես գնայ: Բոլոր սրտովս  
 Խղճում եմ ես անբաղդ վիճակդ,  
 Բայց չեմ կարող մեղմել նորան:  
 Արհամարհիր, ատիր դու ինձ:  
 Զեմ էլ կարող այլ բան սպասել,  
 Արարքս միայն դրան է արժան:  
 Բայց ես պէտք է նրան հետեւմ  
 Հետը մեկնեմ. պարտաւոր եմ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Ծիծաղելով):  
 Զարմանալի արար-աշխարհ,  
 Ողջ աշխարհս մէկի համար  
 Իսկ ինձ համար—և ոչ մի բան,  
 Ո՛չ սեղանի փշրանք չնչին,  
 Ո՛չ մի թերթիկ քեղ փնջից  
 Այդպէս բաշխել միայն գիտէ  
 Վեհ դիցանոյշն իւր պարզեներ,  
 Եւ գեռ, ապօւշ, սիրում էի  
 Հաւտալ նորա արդարութաեն:  
 Այդ գեռ քիչ է—պաշտում էի:  
 Այս, հարիւր անգամ աւել  
 Զերմ, բոց սիրով էի սիրում,  
 Պաշտում նորան, քան ինքն ինձ:  
 Ճիշդ քեզ նման մի խորամանկ,  
 Նենդ ու խարդախ կին է միայն...  
 Թաղ անիծուի նորա անունն.

ԿԼԻԹԻԱ Լոիր, անմիտ, խելակորոյս:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Արդարացի բաժինս կուզեմ:

Այդ տուր, գոնէ, ով դիցանոյց՝  
Բայց այլ ևս ոչինչ, ոչինչ  
Ես այդ մասին չեմ էլ խնդրում,  
Ի՞նքս կարող կլինեմ բանալ  
Կծկուած ձեռքդ: Թէ կարծում ես,  
Որ անզօր եմ ոյժ, զօրութիւն  
Ինձ չտալովդ: Դու կարծում ես  
Հռչակաւոր ձեղնայարկդ՝  
Քո տաճարը քեզ կը փրկէ,  
Կը պահպանէ՛... Ով չի կարող  
Ստեղծադործել՝ քանդել, աւրել  
Միշտ կարող է:

ԿԼԻԹԻԱ Ի՞նչ եմ լսում,

Սարսափելի բան ես ասում:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ սարսափով ողջ մարդկութիւն

Կուզեմ կապել ու կաշկանդել,—  
Ահա թէ փառք, կեանք ունենալ  
Եւ ազգերի սրտի խորքում  
Դող ու սարսափ միայն ազդել  
Եւ այն էլ միշտ, հուրոյաւիտեան,—  
Ահա որն է կեանք ասածդ:  
Մի գիշերում ստեղծագործող  
Վարպետի մէջ ողջ աշխարհի  
Հրաշակերտի միաքը ծնեց.  
Մի գիշերում ստեղծագործած  
Հրաշակերտը բոց կրակի  
Փայփլուքով կը զարդարեմ:  
Լսում ես թէ, խուլ ես դեռ ևս,  
Սուտ, խաբերայ, աստուածուհի:  
Թող վառ ջահից սփռող բոցը  
Թող կեղծ փայլդ իբրև վառուսող  
Անշէջ մի ջահ՝ իմ անունս  
Դարեր անանց անմահացնէ,  
Եւ միշտ յիշուի:

(Նորա առաջը կորելով):

Կանգնիր, անմիտ:

ԿԼԻԹԻԱ

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Թնդ ինձ, թող տուր:

**ԿԼԻՑԻԱ**

(Աշխատելով զօռով պահել):

0՝, օգնութիւն...

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Դէն, դէն գնա: Մի խանգարիր.

Այժմ միայն ճանաչեցի

Անմահութեան ճանապարհը:

(Արագ դիմում է դէպի բեմի խորքը, պակսում է ձողա-  
ջանի վրայից վառուազ կերպնը և, ձեռքին բանած ոսե-  
դուզուներով վազելով բարձրանում մտնում և առձարը և  
դուռը փակում իւթ յետեկց):

### ՏԵՍՎՐՄՌՆ, V

**ԿԼԻՑԻԱ** Յետոյ իսկոյն ՏԻՄԱՐԻՏԱ, բիչ յետոյ ԿԱԼԼԻՅ,  
ԴԻՕԿԼ, Քաղաքացիք: Ժողովուրդ, ՄԵԾՐՈԴՈՐ, ԳԵԳԵՍԻՑ  
ԵԼՊԻՑՏ.

**ԿԼԻՑԻԱ**

(Խճն իրեն կորցրած, վաղում է դէպի ձախ: բարձրանուց):

0՝, օգնութիւն... օգնութիւն, վայ...

0՝, մայր իմ, մայր Տիմարիտա:

Սարսափելի ճակատագիր:

Ա՚ի, շուտ հասիր, կանչիր նորան:

**ՏԻՄԱՐԻՏԱ**

(Դուրս դաւագ իւր անից):

Ո՛վ էր ինձ մայր կանչողն հիմա:

**ԿԼԻՑԻԱ**

(Ճնշասպառ):

Հարցնելու ժամանակ չէ:

Կանչիր նորան:

**ՏԻՄԱՐԻՏԱ**

Ուրեմն դու ես:

Եւ գեռ ևս վստահացար...

**ԿԼԻՑԻԱ**

Որդիդ... որդիդ խելքն է թուցրել...

ինքը իրեն չէ ճանաչում...

**ՏԻՄԱՐԻՏԱ**

Ի՞նչ գործ ունիս դու որդուս հետ:

Դէ, հեռացիր, գնա, կորիր:

**ԿԼԻՑԻԱ**

Դնու, դու միայն նորան փրկել

Դնու կարող ես: Մի վայրկեանի

Գործ է միայն... Դէ, շտապիր:

**ՏԻՄԱՐԻՏԱ**

Բայց ուր գնամ:

**ԿԼԻՑԻԱ**

Դէպի տաճար...

Խելագարը կամենում է

Անհետ կորցնել ողջ տաճարը:  
ՏԻՄԱՐԻՑԱ Գնա, կորիր, իմ չէմքիցս:

(Բնմի խորդում ձախ կողմից երևում են քաղաքացիք. Դա-  
յա մէջ և կապիս ու Դիօկլ):

ԿԱԼԼԻՑ Բարդ-բարդ ծուփի է քըլում:  
(Բացը տաճարի առաստղի տակից դուրս է ժայթքում):

ԿԼԻՑԻԱ (Նկատելով ոյդ բանը):

Սարսափելի բան պատահեց:

Այժմ արդէն, էլ շատ ուշ է:

ԶԱՆԱԶԱՅՆ (Աղաղակելով և իրար ընդհատելով):

ՀԱՅՆԵՐ Տաճարն է, վայ մեր տաճարն է

Այրում-վառում—Տաճարն է, ախ...

ՏԻՄԱՐԻՑԱ Կէս գիշերին ինչ են այսպէս

Գոռում-գոշում բարձրացրել:

ԿԼԻՑԻԱ Մեծ տաճարն է բոցավառուել:

ՏԻՄԱՐԻՑԱ Սուտ են ասում...

ԿԼԻՑԻԱ Որդիդ, որդիդ

Հրդեհ ձգեց:

ՏԻՄԱՐԻՑԱ Սուտ ես ասում,

Որ այդպիսով կորցնես նորան:

ԿԼԻՑԻԱ Թշուառական, ես քեզ միայն

Հաւատացի և գաղտնիքը

Քեզ ասացի, —ուրիշ ոչ ոք

Զի իմանալ:

(Կրակը հետզետէ բորբոքում է՝ շուտով ամեազ մե-  
զումը կորչում է բոցերի մէջ):

ԱՄԲՈՒՆԸ Հրդեհն անցրէք:

Մեծ տաճարը փրկելու ճար,

Հնար գտէք: — Ե՛յ, օգնութիւն: —

Դէ, շուտ հասէք: — Այս կողմն եկէք...

(Տաճարի սանդուղներից վեր բարձրանալով, հրում  
են գաները):

ՊԵՐԵԾ 208. Դռներն ամուր փակուած են, պինդ: —

ՆԵՐ Ներսից սողնակ է անցրած: —

Զարդ ու փշուր արեք շուտով:

ՏԻՄԱՐԻՑԱ (Հանգիս ու անիւով):

Այդ անողը իմ որդիին չէ:

Դժբաղութիւն....

ՏԵՇՆԵՐ

(Ամրոխը արագ անում է, վերջը արագ բեմը ըստը-  
մին լցնում շատերը իրար յետելց դոլիս ևն նւպկո-  
տը նախարեսք դանից ևնի կողմից դեղնուիլ և Սեպոռ-  
դոր իրենց տնից լնդհանուր իրարանցում, ամերը դե-  
ռ գեն վաղում, յօւսահասութիւնից ձեռներ-մասները  
ջարդելով):

ԱՄԲՈՒՆԸ Կացին տուէք, սանդուղտ բերէք:

ԵԽՊԵՑԻ Սրբավայրը բոցերի մէջ

Անհետ կորաւ: Փող փշեցէք,

Նեփորները հնչել տուէք:

ԳԻԳԵՍԻՑ Ի՞նչ, աշխարհիս վերջն է հասել:

ԿԼԻՑԻԱ Ո՞ւր է, արդեօք, Պրակսիտելն:

(Ճըռւմ-անցնում է ամրոխը և անհետանում բեմի խոր-  
քում):

ՄԵՏՐՈՒԴՈՐ Օ՛, սարսափի անանց զիշեր:

Արիւնագոյն բոցերի մէջ

Սրբավայրն է անհետ կորչում.

Մի որբավայր, որի հատը,

Հաւասարը չունի աշխարհա:

(Բեմ յետելց լսում է փողը անընդհատ ձայներ):

ԺՈՂՈՎՈՒՐԻ Օ՛, չար, նենդ բաղդ... Դժբաղդութիւնն:

Մենք կորած ենք:—Վայ մեր զլխին:

Երկնքիցն է թափում հուը—

Աստուածների բարկութիւնն է:

ՄԵՏՐՈԳՈՐ (Հայնը բարձրացնելով):

Բոլորսվին իզուր է ձեր

Ողը, աղաղակ: Աստուածների

Ցասումը չէ խառնուած այնտեղ, —

Դա մի մարդու անլուր, ստոր

Մեծ չարութեան, ձեռքի դործ է:

Անողն, անշուշտ, նփեսոսի

Թշնամին է, մեր մեծութեան

Չար նախանձորդ, Որոնեցէք,

Գալք նորան:

ԺՈՂՈՎՈՒՐԻ

(Կատաղոծ)

Որոնեցէք.

Գալք շուտով: Մահ, մահ նորան:

Հաղարաւոր կտոր արէք

Պիղծ մարմինը:

(Անդհաս կայնի հարուածների տակ տաճարի երկ-  
փեկ գաները բացւում են երկուան էլ Շեմի վրոյ ե-  
րեսում է Հերոստրատը, վառուող ջահը բարձր բանած.  
դեմքը կորած մուրի մէջ մազերը դզգուած Ամրօիթը տա-  
րուի զարհուրած նորա տեպից յետյետ է քաշւոմ):

ՀԵՐՈՍՏՐԱՏ

(Վաճելով իշխում է սանդուխտներից, կայրնի ուրա-  
խութեամբ շարժելով ձեռքի ջահը):

Մեղաւորին էք որոնում:

Գիացէք, ուրեմն, լաւ իմացէք

Ե'ս եմ, ես այդ, Սփեսացի

Հերոստրատու, — ձեր մտքերում

Թող պինդ դրոշմուի, արձանանայ

Իմ անունս, որ յաւիտեանս

Էլ չմոռնաք: — Ե'ս եմ արել,

Ես՝ Հերոստրատու: Եւ՝ արածովս

Պարծենում եմ:

(Ընդհանուր զայրացթի և սարսափի աղմաւկ: Մի ակն-  
թարթում կատաղան ամրութը շրջապատում և կալմեն-  
տարում է նորան: Տիմորիտան, որ մինչ այդ հզարա-  
ութիւն կանգնած էր նախաքեփ վրայ, այդ խօսքերը լւե-  
լիս, առանց ձայն հանելու, ինչպէս կայծակնահար, զե-  
տին է դլորում: Տաճարի առաստաղը ահադին աղւ-  
մուկով փռու է գոլիո):

(ՎԱՐԱԳՈՅԵՐՆ ԻՃՆՈՒԽՄ Է)

## Ե. ԳՈՐԾՈՂ ՈՒԽԹԻՒՆ

Ոչ շատ մեծ գահլին: Զախ կողմը՝ առաջամասում մի դուռ, աջ կոմը, առաջամասում մի ուրիշ անելի փոքր դուռ թեմի խորում երկար սինաշար, սիների մզը լսն անցքերով, ոչ շատ բարձր ծովեզր, որտեղից բացւում է անսարան դեպի ծովը: Կաւերի առանձին առանձին երեւցող կցմերի կատար ներկց նկատելի է, որ շինութիւնը կտուցուած է հենց ծովափին հաւահանգստի մաս: Յետեկ մասում դեռ ևս երեսմ է ծխացող և արեկ շողերով լուսաւրուած, տաճարի կողմակի ճակատի աւերակները: Զախ կողմը բարձրավանդակի վրոց, առանձին աեղ դատաւորների համար: Աչ կողմը փայտէ նստարան:

### ՏԵՍԱՐԱԿԻՆ, I.

ՀԵՐՈՍՏՐՈՍ (Շվեյցարկապ, դաւկը նստարանին յեց, քնած է յատակի վերոց նրբեմ-երեմն ձախ կողմից լսում է դուրս աղմող ամբոխի իսուլ ձայնը Զախ դրան դրսի կողմից դրդոցով բացւում է դրան ճանր սողնակը):

ՄԵՏՐՕԴՈՐ (մտնում է զմնուարի ուղեկցուաթեամբ):

ՄԵՏՐՕԴՈՐ (Դիմելով Հերոսաբատին):

Քնած է նա:

ԶԻՆՈՒՈՐ Հէնց որ այստեղ

Բերինք նորան և ամբոխի

Զայրոյթ-վրէժից ազատեղինք,

Իսկոյն քնեց մահանման

Խօսունկ քնովի:

ՄԵՏՐՕԴՈՐ Բայց չփորձեց

Փախուստ տալու:

ԶԻՆՈՒՈՐ Առաջներս

Ընկած կտար, կարծէք, հարսնիք

Կամ հրաւէր գնալիս լինէր:

ՄԵՏՐՕԴՈՐ Օտարոտի բան ևս ասում:

Մի գուցէ թէ՛ ձեր աշալուրջ

Հակողութեան դլիմին անուշ,  
Քաղցր երազ բերել կուզէր...  
**ԶԻՆՈՒՈՐ** Իզուր. անմիտ փորձ կլինէր:  
(Ցյօք առլուգ բեմի եռոք):

Խոր, անյատակ գահավէժ է  
Այնտեղ՝ ներքեւ...

**ՄԵՏՐՈԴՈՐ** (Կարքեւ նոյելով և յեսոյ ցաց առլուգ ողոկողի դուռ):  
Իսկ այս դուռը:

**ԶԻՆՈՒՈՐ** Արթուր հակող պահապան կայ  
Եւ խիստ ամուր կողակէք ունի:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Քնի մէջ):  
Մինչ յաւիտեան... հաւատարիմ...

**ՄԵՏՐՈԴՈՐ** Զառւանցում է:  
(Լուսաւ են ամրուի ողուցիկ նոյներ):  
Ամրուխն հազիւ

Կարող լինենք զապած պահել  
Խրաւացի պահանջ էլ է,—  
Շուտ դատաստան կտրել, պրծնել,  
Բայց բանն այն է, որ դորա հետ  
Ազատ մուտք չեն տալիս գալու  
Դատողներին:—Դուք ճանապարհ  
Բացէք եկող դատողներին:—  
Ես կը մնամ առ այժմ այստեղ:

**ԶԻՆՈՒՈՐ** Այս ըովէիս:  
(Դուրս է գնում ձախ կողմից):

**ՄԵՏՐՈԴՈՐ** Զարթիր: Վեր կաց:  
Արդէն լոյս է: Առաւօտ է:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Փակ աչքերով):  
Առաւօտ է...

**ՄԵՏՐՈԴՈՐ** Ե՛լ, ել, զարթիր:  
**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Աշքերը բանելով):

Ո՞վ էր ասում առաւօտ է:  
Դու էիր, հա:—  
(Ախորժանքով ձգուելով):  
Օ՛, շատ վաղուց,  
Վաղուց էր, որ այսակս հանգիստ  
Զէի քնել: Խնձ կադդուրիչ  
Անուշ քուն էր:—Սա առաջին  
Անգամն է, որ երկար, անթիւ

Դառն օրերից յետոյ միայն  
Այսպէս հանդիսաւ քնում եմ ես,  
Վաղուան տանջող յաջողութեան  
Հոգսից աղափ: Արժէ, անշուշտ,  
Որ մարդ հանդիսաւ, անդորր առնէ  
Իւր կատարած գործից յետոյ:

**ՄԵՏՐՕԴՈՐ** Դու դեռ ևս զառանցում ես:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Կէս-բարձրացած, նայում, դիտում է տաճարը):

Ա'լի, ոչ: Միայն դեռ նոր ծագող  
Արեգակի շող ու լուսով  
Հազիւ կարող եղայ զգալ  
Իմ անկաշառ հայեացքովս  
Արած գործիս ողջ մեծութիւն:  
Գոհ եմ, զոհ շատ. արած գործս  
Կատարեալ է:

**ՄԵՏՐՕԴՈՐ** / Մի ականջ դիր,  
Խելքի պառուկ: Ժողովուրդը  
Մի ընդհանուր բերան դարձած  
Անէծքով է արտասանում  
Քո անունդ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Հրացացաւ աշքերով):  
Իմ անո՞ւնս:

Այն էլ ամբողջ ժողովո՞ւրդը:  
Օ՛, գիտէի, ըզգում էի:

**ՄԵՏՐՕԴՈՐ** Այս ըստէիս դատաստանի

Առաջ պիտի ենես, զիտմս:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Եւ անմիտոյ սպասում եմ.

**ՄԵՏՐՕԴՈՐ** Զէիր ուզիլ սրտիդ բեռը

Մի փոքր ինչ թեթեցնել:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Հը՝ մ... քո առաջ: Զես ըմբռնիլ:

**ՄԵՏՐՕԴՈՐ** Մի մոռանալ, Մետրօդորն եմ,

Որ ամենից խոստովանած

Խելք-հանճարով դժուարագոյն

Առեղծուածներ է բաց արել:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Խղճում եմ քեզ բոլոր հոգովս:

Միայն ինքդ ես քո հոգածուն

Ու գնհատողդ: Քո յիշտակդ

Կանցնի շուտով, կանցնի նոյնպէս.

Խմաստութիւնդ: Հպարտացիր,  
 Փանի դեռ ևս մոռացութեան  
 Անլոյս, խաւար, անհոդ ովկիան  
 Զէ կուլ տուել տարիներդ:  
**ՄԵՏՐՈԴՈՐ** Զէ որ, դժբաղդ, ես էլ նոյնպէս  
 Դատողներիդ թուի մէջ եմ:  
**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Զէի ուզիլ մեր դերերը  
 Լոկ մի ըովէ փոխուած տեսնել:

## ՏԵՄԱՐԻԿ, II

**ՀԵՐՈՍՏՐԱՏ, ՄԵՏՐՈԴՈՐ, ԹՐԱՍՈՆ,** (և ուրիշ երկք  
 հոգի էլ վեհ, յամրաբայլ մտնում են ձախէկուլից)՝ ԵՐԿՈՒ  
 ՁԱԿՈՒՈՒՐ (մտնում են նոցա յետերից և կանգնում դռան  
 երկու կողմէ):

**ՄԵՏՐԱԴՈՐ** Դատաւորներդ եկան արդէն:

(Դատաւորները լուս նստում են իրենց տեղերը; Թրա-  
 սոնը նստում է մէջ տեղը. առաջին նստարանը մնում է  
 Մետրոդորի համար):

**ՄԵՏՐՈԴՈՐ** (Դիմուվ դէպի էւր աթոռը):

Մեծարելի Թրասոնին

Ողջոյն յաւէտ:

**ԹՐԱՍՈՆ** (Գլուխ շարժումով շնորհակալութիւն յայտնելով):

Երբէք դեռ ևս

Սյսչափ թախիծ, վիշտ ու մորմոք

Զենք զգացել մենք սրբազան

Դատաստանին ձեռք զարկելիս:

Դեռ մեր միաքը չէ կամենում

Հաշտուել, տեսնել, —թէ նոյն իսկ իւր՝

Եփեսոսի ծնունդ զաւակ,

Մեր իսկ արիւնն այդ անաստուած

Գործի տէրն է: Երբ մեզանից

Ամէն մէկս վստահօրէն

Կարող էինք չը հաւատալ

Այդ ամենին բայց դու ինքդ,

Քո բերանով քեզ մեղաւոր

Ճանաչեցիր ու յայտնեցիր:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Եւ նորից նոր, կրկին անգամ

Դատողներիս առաջ կասեմ  
 Բարձր ձայնով. Ես արեցի,  
 Զեմ թագյանում, այդ ամենը:  
**ԹՐԱՍՈՆ** Քեզ ով գրդեց.  
**ՀԵՐՈՍՏՐՈՏ** Եւ ոչ մէկը:  
**ԹՐԱՍՈՆ** Բացի քեզնից ուրիշ ոչ ոք  
 Տեղեկութիւն անգամ շունէր  
 Քո շարամիտ գործի մասին:  
**ՀԵՐՈՍՏՐՈՏ** Ո՛չ ոք: Միայն ես գիտէի  
 Դիտում ու գործու. և արեցի.  
 Եմ էլ զղջում գորա համար:  
**ԹՐԱՍՈՆ** Ասա, գու մեղ, ինչ պատճառով,  
 Ի՞նչ դիտումով անվերջ, յաւէտ  
 Անէծքի տակ դրէր զլուխոդ:  
**ՀԵՐՈՍՏՐՈՏ** Միանոյն չէ ձեզ համար, թէ  
 Ի՞նչ դիտումով կամ պատճառով,—  
 Ահա հէնց այժմ իմ իսկ զլխովս  
 Յանցանքս քաւել պատրաստ եմ ես:  
 Երկար հարցեր էլ չ'տաք ինձ:  
 Առէք կեանքս և այդ գնով  
 Փրկանք տուէք այն ամենին  
 Ինչ որ արի, կատարեցի:  
**ԹՐԱՍՈՆ** Այդպէս, անշուշտ, չէիր խօսիլ,  
 Թէ որ անձու արդարցնելու  
 Հնար ու ճար ունենայիր:  
**ՀԵՐՈՍՏՐՈՏ** Ի՞նքս եմ ինձ արդարացնողն:  
**ԹՐԱՍՈՆ** Բայց ում առաջ, եթէ ոչ քո  
 Առաջդ նստած դատողներիդ:  
 (Աջքերը երկինք գաբնելով):  
**ՀԵՐՈՍՏՐՈՏ** Աստուածուհու աշքի առաջ:  
**ԹՐԱՍՈՆ** Հըմ, նորանով, որ անսահման  
 Անարգանքին ենթարկեցիր:  
**ՀԵՐՈՍՏՐԾ** Դորս փոխան և անսահման  
 Սիրում էի, պաշտում նորան:  
**ԹՐԱՍՈՆ** Դեռ հայնոյել, սրբապղծել  
 Դու կարմղ ես նորա անունն:  
 Բայց մեզ պատճառն, պատճառն առա  
 Քո նենգամիտ չար խորհրդի:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մահուան դիմաց կանգնած բողէն

Խոր լոռութեամբսքողելն, անշուշտ,

Շատ առաւել արժանի է:

(Թրաստնը նշան է տալիս զինուարներին, որմբ բաց են  
անում գուռը Շեմի վրոյ երեսը և Տիմորիան, որին  
զինուարներից մէկն՝ առաջնորդում է դատաւարների մօա):

### ՏԵՍԱՐԱԿԻ, III.

ԱՌԱԶԻՆՆԵՐԸ և ՏԻՄԱՐԻՑԱ.

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ցնցւում է մօրը տեսնելիս):

Օ՛...

ԹՐԱՍՊՈՆ Ճանաչնամ եռ դու այս կնոջն:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Իմ մայրս է, մայրս է դա:

ՏԻՄԱՐԻՑԱ. (Քուրովին գումարուած, բայց կանքի դժով եածկում  
է իու յու զումը. հանդիսա ձայնով):

Նորա մայրն եմ:

ԹՐԱՍՊՈՆ Գիտեմ, ինչո՞ւ,

Տիմարիտա, այստեղ ես դու:

ՏԻՄԱՐԻՑԱ. Գիտեմ, այս:

ԹՐԱՍՊՈՆ Դու չես կարող

Նորա արած սարսափելի

Գործի պատճառն մեր ամենքիս

Մաքի առաջ պարզել, մեկնել.

ՏԻՄԱՐԻՑԱ. Ո՞վ անաշառ, դատաւորներ,

Մի հաւատաք նորա խօսքին:

Իզուր տեղը ցնորդ տապից

Իեկը կորցրած, սուտ է ասել,

Մատնել իրեն ու զբարտել:

ԹՐԱՍՊՈՆ Ինչով, արգեօք, կարող ես դու

Ասած խօսքերդ ապացուցել:

ՏԻՄԱՐԻՑԱ Ինձնից նորան ժառանգութեան

Անցած շիտակ, անշեղ ոգովս

Այն առաջին իրն, առարկան,

Որ գրաւեց իւր մանկական

Եւ առաջին անմեղ հայեացքն՝

Սուրբ տաճարն էր: Եւ ես նորա

Օրօրոցը օրօրելիս

Երգել եմ միշտ աստուածուհուն,  
 Նորա լոյսի, չքնաղ կայտն:  
 Եւ երբ արևն արշալոյսին  
 Իւր վարդամատ փայլ շողերով  
 Դիցանոյշի սուրբ տաճարի  
 Եռանկիւնի դրուագաւոր  
 Բարձր ճակատն ալ ծիրանի  
 Երանզներով զուգում, պլնում,  
 Զարդարում էր, իւր մանկական  
 Մանրիկ թաթերն ամեն անդամ  
 Նոր հրճուանկով դէպի նա էր  
 Պարզում, մէկնում և ծափ զարկում:  
 Իմ աչքերս հանգան անյետ  
 Եւ մարեցին, որ նոր ի նոր,  
 Կրկին անգամ վառուին, փայլին  
 Նորա պայծառ աչերի մէջ,  
 Եւ ինչպէս որ խիստ հոգատար  
 Պարտիզպանը իւր մարդերի,  
 Ածուների ծաղիկներից  
 Բոլորի մէջ մէկը միայն՝  
 Հազուագիւտը գգւում, պահում,  
 Պահպանում է, այնպէս էլ ես  
 Իւր հոգու մէջ միակ ձգտում,  
 Իղձ եմ դրել, սնել, մեծցրել,—  
 Իւր անունը փառաւորէ,  
 Մեծ սրբութեան անուան հետ յար  
 Կապէ, ձուլէ հուր յաւիտեան:  
 Այժմ ասա, անգին զաւակս,  
 Դու ես արել այն ամենը.  
**ՀԵՐՈՍՏՐԱՑ Ե՛Ա Եմ արել, անուշ մայլիկս:**  
**ՑԻՐԱՐԻՑԱ (Գոռալով):**  
 Սնւտ եռ ասում:

**ՀԵՐՈՍՏՐԱՑ**

Ե՛Ա Եմ արել,  
 Ես միայնակ: Եւ դու միայն  
 Կարող կլինիս ինձ հասկանալ:  
 (Զինուրներից մէկը արագ մօտենում և կամնում է  
 Ըսր ընկնող Տիմրէտոսին բռնել):  
**ՑԻՐԱՐԻՑԱ** (Հեռացնելով նորան):

Թողէք ինձ դուք: Դեռ կարող եմ  
Թոյլ ոսքերիս վերայ կանգնել:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Ինչ երազաւմ, ըզձում էի,  
Այժմ արդէն կատարուած է:  
Հրճումիր, մայր իմ: Յոյսերդ ամեն  
Կատարուեցան: «Փառք տուր ինձ, փառք,  
Ինձ փառք չնորհիր, աստուածունի»  
Այդպէս էիր փոքրիկ մանկանդ  
Սովորեցնում աստուածունուն  
Ազօթելիս: Այժմ արդէն  
Աստուածունին պարզեել է  
Ինձ այդ փառքը: Թէս զօռով,  
Ակամայից՝ բայց տուել է.  
Իմ անունս այսուհետև  
Իւր տաճարի յիշատակի  
Եւ անուան հետ կապուած է միշտ,  
Միշտ անբաժան: Դու կը լսես,  
Թէ ինչպէս նա՝ իմ անունս  
Բերնէ բերան կանցնի շուտով.  
Դեռ ծխացող աւել-բեկոր  
Մնացորդներից նա թե կառնի,  
Կը սաւառնի աշխարհ բոլոր,  
Կը տարածուի և յաւիտեան  
Վարդկանց մտքում բուն կը դնի:

**ԹՐԱՍՈՆ** Ուրեմն այդ է դրդել քեզ, համ:  
Յիմար, անմիտ, ախալուել ես:  
Անհեա կանցնի քո չար գործի  
Վաս համբաւը և ծխացող  
Այս մեհեանի բեկորների  
Վերայ նորից մի նոր տաճար  
Կկանդի շուտով:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Բայց մի համեստ,  
Ինչպէս և դուք, խոճուկ մի բան  
Քարից կերտած շքեղ մի տուն—  
Կնոջ համար: Բայց ոչ այն վեհ,  
Հուժկու, ահեղ սրբազան վայր,  
Հսկայ նախնեաց հսկայ և գործ,  
Որ խոճալի ձեր սերնդին  
Եւ կուրացնում եւ ճնշում է:

**ԹՐԱՍՈՆ** Մենք կփշինք, անհետ կանենք  
Քո ըղձերդ, երտզներդ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Անկարող էք:

**ԹՐԱՍՈՆ** Թմջ քո անունդ

Մարդկանց մտքից անհետ կորչի:  
ՀԵՐՈՍՏՐԱՏ Զերպէք իսկ...

**ԹՐԱՍՈՆ** Օրէնք, պատուէր

Մենք, կը հանենք —ծանր պատիժ

Կստանայ նտ, ով այսուհետ

Քո անունդ արտաստանէ:

### ՄԻՒՍ ԴԱ-

**ՏԱԼՈՇՆԵՐԸ** Մահուան պարիժ թող սահմանուի  
ՀԵՐՈՍՏՐԱՏ Ապարդիւն ջանք, զուր աշխատանք:

Նախ փորձեցէք շղթայ զարկել

Քամիներին, ծովի ալլիքն

Ամուր կապով կաշկանդեցէք,

Սկիւթայի է՞ն ծայրերից

Մինչև սիւներն Հերկուլեսեան

Ստիպեցէք, որ ձեր օրէնքն

Ամենքն յարգեն, հնազանդուեն...

Ինձ սպանել դուք կարող էք,—

Բայց իմ անունս մինչ յաւիտեաչ

Կապրի անվերջ. ես այդ անունն

Թոց տառերով եմ քանդակել

Որձաքարի ժայռի վերայ.

Երբ ձեր կորած, մամուով պատած

Գերեզմանն իսկ չի էլ պատմիլ

Թէ աշխարհումս դուք եղել էք,

Երբ ձեր հողին հաւասարուած

Քաղաքն անհետ կորած կլինի,

Այն ժամանակ անզամ ամենքն

Գեռ կը յիշեն արած գործս,

Հերոստրատիս անունը դեռ.

Կը յեղյեղուի մարդկանց բերնում:

**ՄԵՑՐՈԴԻՈՐ** Բայց անէծքով ու զզուանքով:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Զնս պարծենում, մայր, քո որդովդ:

**ՏԻՄԱՐԻՏԱ** Որդիս չես դու, —եթէ հայրդ

Անհիւրընկալ մռայլ Ստինքսի

Ափերից իսկ վերադառնար,  
Անշուշտ նա էլ քեզ կմերժէր՝  
Ճիշդ ինձ նման։ Սրտիցս ահա  
ես հանում եմ դէպի քեզ իմ  
Տածած սէրս, ինչպէս անպէտք  
Մի մոլեխոտ, դէն շպրտում։

## ՀԵՐՈՍՏՐԱՏ Մայր!

ՏԻՄԱՐԻՏԱՆ եթէ դորա համար էր, որ  
Կուց կուց թափած աղի արցունք,  
Անվերջ հոգսեր, պահած-պաշտած,  
Անուշ զաւակս պիտի մեծնար,  
Հասակ առնէր և մարդ դառնար  
Ըստ, կասեմ, թող անիծուէր, —  
Այն օրն ու ժամ, որ քեզ ծնայւ  
ՃԵՐՈՍՏՐԱՏ Գեզ հետ մէկտեղ ես էլ կասեմ,

Թող անեծուի այն օրն ու ժամ։  
Ինչու մէջս զարթեցըիր  
Մեծ զործերի ծարաւ, փափադ.  
Ինչու սրտումս դուչվառեցիր  
Ամպերի մէջ սաւառնելու  
Անշէջ ձգտում, եթէ պիտի  
Ինձ չտայիր և թռչելու  
Թեեր, ասա։ Օ՛, թէ դու ինձ  
Պարզե չտայիր այս դառնութեամբ  
Լցուած կեանքի տանջանք, ցաւերն...  
Այն ժամանակ ես ստիպուած  
Զէի լինիլ մօրս անէծըն  
Սուած զլսիս, ոպքով հրել,  
Հեռու քղել այդ կեանքն ինձնից,  
Ինչպէս ժանր մի բեռն ու լուծ։

## ՏԻՄԱՐԻՏԱՆ (Դառնալով դատաստորներին)։

Ապա ուրեմն ես էլ պատժի,  
Պատուհասի արժանի եմ։  
Ինձ էլ տարէք կառափնատեղ։  
Դուք լսեցիք, որ ես ևս  
Մեղսակից եմ նորա գործում, —  
Սըրէք ներման արժանանալ  
Ես չեմ կարող։

**ԹՐԱՍՈՆ** (Յուղուած):

Տունդ դարձիր:  
Հաղաղութեամբ  
Հերոսրած  
Ներիր որդուդ:  
ՏԻՄԱՐԻՏԱ  
Այդ կը փորձեմ:  
Հերոսրած  
ՏԻՄԱՐԻՏԱ իմ արիւնս, անուշ զաւակս...  
(Մի քայլ է անում դեպի հա: Հերոսարատն ընկնամ  
է նորա առները: Մայրը ձեռքը դնում է նորա դմբին):  
ԹՐԱՍՈՆ Տարէք սորան,  
ՏԻՄԱՐԻՏԱ ինձ չուղեկցէ: Այսուհետեւ  
իմ ճանապարհս ես մենունակ  
Խաւարի մէջ պիտի գտնեմ:  
(Յամրաբայլ ուղղուամ է դեպի դուռը):

### ՏԵՍԼԵՐԸ, IV

**ԱՌԱԶԻՆՆԵՐԸ** (առանց Տիմարիտայի):

**ԹՐԱՍՈՆ**

Այժմ արդէն, երբ մեր առաջ  
Գործած ոճրիդ բուն շարժառիթն  
Պարզ յայտնի է, մեզ մնում է  
Միայն ցաւել ազնիւ ձիքի  
Եւ ոյժերի այսչափ դառն  
Անկման վերայ: Ինքդ արդէն  
Քո իսկ ըելնով խիստ անողոք  
Դատավճիռ զլսիդ վերայ  
Պարզ կարգացիր: Մենք այս դէպօւմ  
Միայն նորա գործադրող  
Ոյժն ենք կազմում: Այժմ դառնանք  
Վճռահատին:

(Զինուորի տուած նշանի վրայ մտնում են երկու սորուկները մերում է մասալից մի քուեառուք (արո) որ գնում է թրասոնի առաջ, մասը բաժանում է դատավճիռին մի-մի և սպիտակ քուէ: Ցետզ սորուկները դարս են գնում: Թրասոնն եղնում է աեղից):

Տէր դատաւորք,  
Զեր ձայները:

(Առաջինն ինքն է ձգում իւր քուեն տուփի մէջ Միւս ները հանեւում են նորան. յետոյ կրկին նոտում են իրենց տեղերը. Թրասոնը զբուշութեամբ դատարկում է տուփը, համրում է քուեները և հանդիսաւոր կերպով յայտարարում է):

## Նա միաձայն

**Մահուան պատժի է ենթարկում:**

(Դառնալով Հերոսորատին, որ Թացել էր կանգնած բոլորովին անշարժ):

Գուցէ ունի մի ցանկութիւն

Կամ ասելիք:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**

**Մօրս միայն**

Վրէժիսնդիր չինէք երբէք

Իմ արածիս, գործիս համար:

**ԹՐԱՍՈՒՆ** Այդ խնդիրդ կը կատարուի:

Ամենքս մէկ սեղ երաշխաւոր

Կլինենք դորան:—Այժմ՝ մահուան

Պատրաստուիր դու:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**

**Սու պատրաստ եմ:**

(Թրասոնը, Մետրօդորը և միւս դատավորները ելնում են ձախ կողմից, դինուորները հետեւում են նոցա. լուսում է, ինչպէս դրսից ամրացնում են դառն առջնակը):

**ՏԵՇԱՐՄԱՆ Վ**

**ՀԵՐՈՍՏՐԱՏ. (ՅԵՄՈՅ) ԿԼԻՏԻՆ:**

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**

(ՄՇՆԱԿ):

Օ՛, աստուածներ, ինչպէս յոգնել,

Դադրել եմ ես: Գունն յեղյեղուկ,

Փոփոխամիտ բարեկամ է:

Միշիթարում, սփոփում է,

Բայց և նորից մեղ պատրանքի,

Հիասթափման մէջ է ձգում.

Անուշ օրօր է մըմնջում,

Որ մեղ նորից երկիւղ ազդէ:

Բաղդի ժապուն ժամ-օրերին,

Պատրաստակամ, հաճկատար է,

Վշտի ժամին ազահ, ժլատ:

Այդ պատճառով քեզ իմ ողջոյնս,

Քեզ՝ յուսալից իւր երկուորեակ:

Բաւական է, եթէ մէկին  
Մի օր գունէ քո գրկի մէջ  
Օրօր կարդաս, նա այլ ևս  
Ել յաւիտեան աշք չի բանալ:  
(Աջ դասն յեռեկից թեթև փոխոց է լուսամ Կա ու  
շաղըութեակ ակած է դնում):

Ոտքդ արդէն չէմքիս վերայ  
Դըրեցիր, հա:

(Ելնում է տեղից):

Ողջունում եմ:

(Դուռը բացւում և կիսիան շապազ ներս և մանում):

Դու ևս, Կիտիա: Մահապարտի  
Մօտ ինչ ունիս: Ինչու եկար:

**ԿԼԻՑԻԱ** Որ ազատեմ քեզ այստեղից:  
ՀԵՐՊՈՍՐԱԾ Այժմ միայն կամեցա՞ր այդ...  
**ԿԼԻՑԻԱ** Դու չպէտք է կեանքից զրկուես:  
ՀԵՐՊՈՍՐԱԾ Հիմա արդէն էլ շատ ուշ է:

**ԿԼԻՑԻԱ** Ակամայից քեզ վիշտ ու ցաւ  
Պատճառեցի չէի կարող,  
Ոյժ չունէի զարհուրելի  
Դէպերի դէմ կռիւ մղել.  
Բայց և այնպէս հոգուս վրայ  
Ծանր քարի պէս ճնշում են  
Այդ բոլորը: Եւ ես այժմ  
Կամենում եմ մահուան ճանկից  
Քեզ ազատել, - և կարող եմ:

ՀԵՐՊՈՍՐԱԾ Զուր աշխատանք:

**ԿԼԻՑԻԱ** Գեգեսիի

Ստրուկ ծառան, որ մի շան չափ  
Հաւատարիմ է դէպի ինձ,  
Դուան մօտ քեզ սպասում է:  
Նորան գլխից ես հանել եմ  
Խոստանալով ազատութիւն  
Շնորհել իրեն. Մեր փախուստի  
Յաջողութեան պիտի օզնէ  
Եւ կուղեկցէ մինչև վերջը:

ՀԵՐՊՈՍՐԱԾ Բայց ուր:

**ԿԼԻՑԻԱ**

Ներքև՝ սանդուղաներով  
Մենք վար կիջնենք. թեթև, սահուն  
Մակոյկը մեզ, որ այժմ պատին

Շղթայած է, իւր մէջ կտոնէ,  
Եւ նորանով նաւ կը հասնենք,  
Ակնթարթում ու անվտանգ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Եւ այդ նաւը...

**ԿԼԻՑԻԱ.** Հէնց այժմ իսկ:

Խարիսխ կտոնէ, ծով կը դիմէ  
Մի դանդաղիր:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Ուրեմն Աթէնք պիտի երթայ:

**ԿԼԻՑԻԱ.** Դէ՛, շուտ, գնանք:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Զարահենդութեաբ):  
Վա՛տ խորհուրդ չէ:

Լաւ ես խորհել: Ասառւածային  
Պրասկսիտելն իւր սիրուհուն  
Փախցնում է. և որպէս զի  
Այդ ժամանակ հարսանիքի  
Ուրախ հանդէսն արիւնաներկ  
Զոհի ստուերն՝ ուրուականը  
Զը մռայլէ, նա առնում է  
Խնձ էլ իւր հետ:

Քեզ կազատենք...

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Ի՞նչ ողորմած, գթասիրտ է,—  
Քեզ թոյլ տուեց այդ անելու:

**ԿԼԻՑԻԱ.** Իմ դիտումն ու ծրագիրս  
Նորան դեռ ևս յայտնած էլ չեմ:  
Բայց ծովափը, նորա հանդէպ  
Համբաւատար եմ ուղարկել  
Եւ քաջ գիտեմ, որ իմ միտքս  
Կը հաւանէ, խրախուէ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Բայց բանն այն է, ևս չեմ կարող  
Համաձայնել առաջարկիդ:

**ԿԼԻՑԻԱ.** Ազատուելու միակ ելքն է...  
Մէկ էլ տեսար յանկարծակի  
Ժողովուրդը աղմկեցաւ...  
Ուրիշ հնարք, միջոց չկայ:  
Նաւհանդստից մեկնող նաւը  
Մենակ նա է...

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Եւ դու կարող  
Պիտի լինես ազատութիւն

Կոչել այդ, հա՞ւ Նս' անիծուած,  
Անարդուածս, հայրենիքից  
Դուքս վունտուածս, — պլիտի ընկնեմ  
Երջանկութեամբ արբած, ուրախ  
Մի զոյգի մէջ:

ԿԼԻՏԻԱ

Կեանքի, մահու  
Խնդիր է սա:

ՀԵՐՈՍՏՐԱՏ

Այդպիսի կեանքն

Ամօթալի մահից անգամ  
Ծանր կիխէր: — Իսկ ևս այստեղ  
Ազատութեան եմ սպասում:  
Բայց ժամանակ չունինք այլ ևս...  
Օ՛, լսիր ինձ: Իմացիր, որ  
Ես էլ նորան հետեւում եմ  
Ո՛չ հաւասար՝ իրեն ընկեր, —  
Օյլ թէ միայն իրեն ծառայ,  
Իրրե խոնարհ մի աղախին.  
Համեստ սիրով պլիտի պատեմ  
Նորա չորս դին, առանց ոչինչ  
Պահանջ, խնդիր ունենալու.

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ ասողը մի կին է, հա՞ւ:

Գնա, գնա կիսաստուծուդ  
Յետեիցը. ծառայ եղիր  
Իրեն ազնիւ, հաւատարիմ  
Սարկուհի կամ աղախին:  
Յաջողութիւն եմ ցանկանում:  
Գնաս բարեւ: — Իսկ ինձ համար  
Ես ընտրել եմ...

ԿԼԻՏԻԱ

Կորուստ և մահ:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչպէս և դու:

ԿԼԻՏԻԱ

Էլ ոյժ չունեմ.

Ժամանակը անցնում է... շնւա...  
ՀԵՐՈՍՏՐԱՏ Գնա, շտապիր:

ԿԼԻՏԻԱ

Վերջին անգամ:

ՖԵՇՆԻԴԱ. (Դրսէց)

ԿԼԻՏԻԱ

Բողէք ներս գամ:

ԿԼԻՏԻԱ

(Շապագ):

Ֆէօնիդան:

Նորա կողմից է ուղարկուած։  
 (Բաց է անում՝ աջակողման դռւը և կանչում)։  
 Որպէս բանբեր է նա գալիս  
 Եւ մեր գործի, մտադրութեան  
 Գաղտնիքներին քաջ ծանօթ է։  
 —Եկ, ներս արի։  
 (Մասնում է քէնիդան մ կողով վարդ ձեռքին)։

## ՏԵՍԱՐԱԿԻ, VI

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ և ՖԷՇՆԻԴԱՆ.

- |          |   |
|----------|---|
| ԿԼԻՏԻԱՆ  | (Դիմաւորելով նորան)։<br>Տեսան նորան,  |
| ՖԷՇՆԻԴԱՆ | Եւ ասացիր ինչ որ պէտք էր։   |
| ԿԼԻՏԻԱՆ  | Անշուշտ, նա ինձ<br>Շտապցնում է։ Այնպէս է, չէ։                                       |
| ՖԷՇՆԻԴԱՆ | (Շփոթուած ու վարանելով)։<br>Ո՛չ, տիրուհի. ինձ ուղարկողն<br>Ուրիշ համբաւ է ուղարկել։ |
| ԿԼԻՏԻԱՆ  | Դէ, շուտ արա, ասա շուտով։   |
| ՖԷՇՆԻԴԱՆ | (Կմւալով)։<br>Ես...   |
|          | (Նաւահանդստի կողմից ձայներ, աղմուկ և լուսում)։                                      |
| ԿԼԻՏԻԱՆ  | Ինչ ձայներ են, ինչ աղմուկ է։  |
| ՖԷՇՆԻԴԱՆ | Փողովուրդը նորան եկեցցէ,<br>Գնաս-բարեա է ձայն տալիս<br>Հրաժեշտի աղաղակն է...։       |
| ԿԼԻՏԻԱՆ  | Հրաժեշտ են տալիս նորան...<br>Աղաղակ է... հապա նաւը...։                              |
| ՖԷՇՆԻԴԱՆ | Նաւը մեկնեց։<br>Իսկ նա... ինքը...։  |
| ԿԼԻՏԻԱՆ  | Պրակսիտելն... միս, ուզում եմ...<br>Սիրտս նորան է ցանկանում։                         |
| ՖԷՇՆԻԴԱՆ | Անկարելի բան ես ուզում։<br>Ազատ, արձակ ծովի միջով<br>Արդէն նորա նաւն է սուրում։     |
| ԿԼԻՏԻԱՆ  | (Ապասմ է գեղի բնիք խորը և նայում է հեռու)։<br>Այնաեղ... հեռուում... առագաստներ...։  |

(Բարձրածացն աղաղակով):  
 Ա՛խ, Պրակասիտե՛լ...  
 (Վայր է բնիքում; իրրե շանթահար):  
**ՃԵՐՈՍՏՐԱՏ** (Ինքն իրեն):  
 Մանր է, գիտեմ:  
**ՖԷՇՆԻԴԱՆ** (Կողմն շոտպազ դնում է նստաբանի վրա և զազում  
գեղի կլիան):  
 Ինչո՞ւ այսպէս դառն ցաւեր  
 Պիտ բերէի ես քեզ համար:  
 Ա՛խ, չգիտես թէ ինչպէս ես  
 Կը ցանկայի ուրախ, բարի  
 Համբաւներով առաջդ ելնել:  
**ԿԼԻՑԻԱՆ** (Դանդաղութեամբ տեղից եւնելով):  
 Մենա՞կ գնաց, — և ինձ թողեց:  
 Այդպէս, կարծեմ, ասացիր, չէ:  
 Նաւհանգստում անդամալոյժ  
 Խեղճ աղքատը արժանացաւ  
 Նորա ժապտին, իսկ ես՝ թշուառս,  
 Որին երէկ դեռ իւր կրծքին  
 Ամուր սղմած, փայփայում էր,  
 Ինձ՝ հրաժեշտի և ոչ մի խօսք,  
 Ո՛չ մի համբոյր գէթ վերջին գամ...  
 Ոյժ ունեցաւ ինձնից զատուել  
 Եւ բաժանուել այդպէս, ահա...  
**ՖԷՇՆԻԴԱՆ** Բայց և ինքն էլ ուրախ դէմքով  
 Զհեռացաւ. դողդոջ ձայնով,  
 Տամուկ դէմքով, թաց աչքերով  
 Շնչում էր, — «Մատաղ բանբեր,  
 Երբ որ նաւս իւր կայանից  
 Ծով կը գիմէ և ինձ աչքից  
 Բոլորովին կը կորցնես,  
 Վազիր շուտով նորա մօտ դու,  
 Ասա նորան, թէ երբ միայն  
 Երջանկութիւնն ու զդիմիչ  
 Քաղցր մոռանքն աղամարդուն  
 Կարենային կապել, գերել,  
 Երբէք սիրաս ես նորանից  
 Զէի զատիլ: Բայց առաւել  
 Մեծ պարտիք է ինձ կանչողը,

Նոյն իսկ կամքիս էլ հակառակ:  
 Կասես նորան այս բոլորը  
 Եւ կողովով վառ վարդերը  
 Լորիկ, անխօս սղջունիս հետ  
 Իւր ոտքերի տակ կը դնես:  
 Թող այդ անխօս վկաները  
 Նորա ներումն հայցեն, առնեն,  
 Ինձ ուղարկեն ազատ հովով,—  
 Թող գիտենայ՝ շրթունքներս  
 Զերմ օրհնութիւն են մրմնջում։  
**ՎԼԻՑԻԱՆ**  
 Կորիր, աչքիցս, քո վարդերովդ։  
 Հեռնե, հեռու տար ինձանից։  
 Նոցա շունչը—թոյն է, վարամ։  
 Տրորիր բոլորն, ոտքի տակ տուր  
 Մէկիկ-մէկիկ։ Իսկ երբ նոքա  
 Հոգոց հանեն և կամ հծծեն,  
 Նոցա ողջոյն, հրաժեշտ կոտս  
 Նորա կողմից, որ ինձ անխիղճ,  
 Տմարդօրէն իւր ոտքերի  
 Տակ արորեց։ Տեսաւ աչքով  
 Ինչպէս ուրախ ծաղկում էի,  
 Անխիղճ ձեռքով նա ինձ պոկեց—  
 Եւ շպրտեց։

**ՃԵՐՈՍՏՐԱՏ**

Նա աստուած է։

Ահա նորա ողջ պարգև  
 Սիրուդ համար։  
**ՎԼԻՑԻԱՆ** Կորիր աչքիցս  
 Քո վարդերովդ, դէ՞ն կորցրու...  
**ՖԷՇՆԻԴԱՆ** Ուրեմն ես պէտք է սոցա...։

**ՎԼԻՑԻԱՆ** Ոչ անուշիկս, էլ ձեռք չտաս  
 Դու նոցանից և ոչ մէկին։  
 Առանց այն էլ շուտով նոքա  
 Կը թառամեն ու կը թոշնեն։  
 Ծովափ տար դու այդ բոլորը,  
 Ալքեների վերայ շաղ տուր,  
 Մէկ-մէկ հեռնե, հեռու ձգիր  
 Դէպի այնանդ, որտեղ դեռ ևս  
 Նորա նաւի փայլուն հետքը  
 Ցոյց է տալիս առ յաւիտեան

Կորցրած բաղմիս արահետը:  
**ՖԵՕՆԻԴԱ** (Սահում է գարդերով մ կողման):  
 Կկատարեմ, ինչ տիրուհիս  
 Պատուիրեց ինձ: Թէ որ կարող  
 Լինէի ես դեռ աւելին  
 Ել կատարել...  
 (Դուքս է դասում ոչ կողման):

**ՏԵՍՄՐԸՆ, VII****ՀԵՐՈՍՏՐԱՏ, ԿԼԻՑԻԱՆ:**

**ԿԼԻՑԻԱՆ** Թառամեցան, կորան վարդերն  
 Եւ սրբազն անտառի մէջ  
 Մաղիկները թոթափեցին:  
 Դու էլ մնաս բարե, գարուն:  
 Բայց և այնպէս արդարացի,  
 Իրաւ էր նա:—Ես ինչ էի  
 Նորա համար: Միայն պատկեր  
 Արտայայտիչ: հազարաւոր  
 Դէմքերից մինն: Ինչպէս եկաւ,  
 Ճիշդ այնպէս էլ անցաւ-գնաց,  
 Լոկ մի բողէ աշխարհ բոլոր  
 Գեղեցկութեամբ ճոխացնելու,  
 Ինչ էլ հետը աւերելով:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Զարաինդութեամբ):  
 Ել ինչ կուզես դու նորանից:  
 Միթէ նա չէր, որ քեզ տուեց  
 Այն բոլորը, ինչ որ հոգով,  
 Ողջ էութեամբ, այնպէս կրքոտ  
 Ուզում էիր,—մշտափթիթ  
 Մատաղ մնալ: Մեր երկուսիս  
 Ցանկութիւնն էլ կատարուած է:  
 Դու անթառամ գեղեցկութեամբ  
 Միշտ կը փթթես. աստուածային  
 Յարգանքներով գեռ նոր կերտած  
 Յար և նման երկուորեակդ  
 Շուք և փայլով տաճար կմտնէ:  
 Իսկ իմ անունս ժամանակի  
 Հզօր յորձանքն դարեր անվերջ

Պիտ զլորէ ու դէմ տանէ  
Գուլոց բոլոր սերունդներին:  
Կետանքն ինձ համար մի տանջանք էր.  
Սակայն այժմ՝ անմահութեան  
Փայլ կստանայ:

ՎԻԼԻՑԻՆ

(Հոգեվայլութեամբ ականջ և գնում):

Սա՛ս... Զայն մի հանիր:  
Լուիր, մի քիչ, Դու չես լսում:  
Իմ սիրելուս ձայնն է հնչում,  
Ինձ է կանչում ևս գիտէի,  
Նա չէր կարող զատուել ինձնից.  
Եւ ջրերի, ծովի անհուն  
Տարածքն անգամ չեն արգելում  
Նորան բարձր, բարձր ձայնով  
Ինձ կանչելու, — Ե՞կ յետեիցս: —  
Ա՛յս, գալիս եմ, Պրակսիտել:  
Ահա եկայ...

(Սաւամասայցի պատից երեն ծովն և ձգում):

ՀԵՐՈՍՏՐԱՑ

(Ըստպով դիմում գեղի ցանկութեան):

Կլիտիա, Կլիտիա.

(Հայ կողմի գանձ ենում ևն զինուարները և դանդաշ  
մատենում նորան. Նա գնում դեղի նոցա):

Ինձ դէպի մա՛հ, տարբէք շուտով,  
Մահուան վերայ ծիծաղում եմ  
Անմահ եմ ես: Անմահ, անմահ:

(ՎԱՐԱԳՈՅԹՆ Ի.ՁՆՈՒԽՄ Է)

Տ. Վ.

**ՎԵՐՋ**